


# ՍԵՎԱԿԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՇՈՒՆՉԸ

Posted on February 3, 2024 by Keghart



Category: [Opinions](#)



**Տատյանա Դարբինյան, [ԾԻԼ համայնք](#), ՀՀ, 29 հունվար 2024**

Հունվարի 24-ին լրացավ հայ արդի գրականության ամենապայծառ դեմքերից մեկի՝ Պարույր Սևակի (Ղազարյան) ծննդյան հարյուրամյակը: Այդուհանդերձ, ամբողջ տարին Սևակյան Է լինելու:

Ամիրյան փողոցը վերջապես զգաց ձյան փափկությունը, բայց եղանակը միակ բանն էր, որ փոխվել էր: Համազգայինի Սոս Սարգսյանի անվան թատրոնում հունվարի 26-ին ամեն ինչ նույնն էր, կարծես թե արտասովոր բան չկար: Մարդիկ շտապում էին զբաղեցնել իրենց տեղերը ըստ կարգերի: Պատվավոր հյուրերի համար պահված առաջին շարքում հագիվ 5 կամ 6 տեղ զբաղեցրած էր: Մյուս շարքերում նստած ներկաները Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մանկապատանեկան և գեղագիտական դաստիարակության կենտրոնի թատերական խմբակի սաների ծնողներն ու հարազատներն էին, ովքեր սրտատրոփ սպասում էին իրենց սիրելիների ելույթին:

Լույսերը անջատվեցին. սկսվեց բոլորիս այդքան սպասած վեհացնող ցերեկույթը: Բոլորի հայացքներում և շուրթերին Պարույր Սևակն էր:

Հայ գրականության հսկայի հոբելյանական 100-ամյակին նվիրված առաջին միջոցառումներից մեկն էր սկսվում:



Երեխաներից մեկի սևակյան սրտաբուխ հարցադրումով սառեց ամբոխի ժխորը.

- «Ինչպե՞ս ապրել»: Պատասխանը տվեց Սևակը. «Ապրել, ապրել, այնպե՛ս ապրել...»

Այդ մթուռայան մեջ բոլորիս դեմքն ու հոգիները լուսավորում էին Պարույր Սևակի հոգեծով աչքերը: Ամենաառջևում կանգնել էր խորհուն տեսքով մի աղջիկ: Եվ հանկարծ նրա բերանից հորդեց Սևակի «Ինձ ծափեր պետք չեն» բանաստեղծությունը, որն ամբողջացավ աղջկա աչքերի սաստող հայացքով: Իրեն ուղղված ծափերը բանաստեղծը համարում էր շքեղ դնչկալ: Հիմա հետաքրքիր, ավելի ստույգ՝ անհասկանալի ժամանակներ են, չէ՞. տասնամյակներ առաջ ոմանք հայրենանվեր գործեր էին անում ծափերի կարիք չունենալով, իսկ հիմա ըստ էության ամեն բան միտված է մարդկային եզո-ն սնելուն: Իսկ բանաստեղծն ուղղակի ուզում էր ափերը պարզել և մի քիչ սեր վերցնել, բայց ոչ իր համար.

«Բազկաթոռներին կտամ ձեր սերը,  
Որ միջանցքներում դրած հասարակ

ճկաթոռներին վերից ջնայեն –  
Ախր, երկուսն էլ նույն ծագումն ունեն՝  
փայտից են շինված...»:

Այս հատվածը ըստ եռթյան կապ չունի նյութական բազկաթոռների և ճկաթոռների հետ... Այն ուղղակի առնչվում է բարոյականության ու մարդկայնականության հետ:

Սևակը ապրեց կարճ՝ ընդամենը 47 տարուց մի քիչ ավելի, բայց թողեց գաղափարական մի մեծ հարստություն, որով կարելի է դարեր ապրել, դասեր քաղել, զինվել գրագետ և կիրթ լինելու ռազմավարությամբ: Բայց ինչպես ասաց ներկաներից մեկը, «Շատ քիչ բան է փոխվել այն ժամանակներից: Հատկապես հիմա, Սևակյան շնչով օրերին, մենք դա առավել քան երբևէ հասկանում ենք. հիմա էլ մարդ կա ելել է շալակն աշխարհի, մարդ էլ կա՝ աշխարհն է շալակած տանում»:



Բանաստեղծության այս տողերը բեկվեցին մեր հոգում սաների՝ Սևակյան վիշտը ըստ արժանվույն ապրումակցելու շնորհիվ:

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր,  
Հարազատ մորից ու որդուց ավել,  
Աշխարհում նա իր աշխարհն է սիրում...

*Սո՛ւտ է: Նա այնտեղ իր շահն է սիրում:*

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր,  
Նա պատմության մեջ իր դարն է սիրում...

*Սո՛ւտ է: Նա դարի ավարն է սիրում:*

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր

**Մեր կյանքն է սիրում, մեր նորն է սիրում...**

*Սո՛ւտ է: Նա միայն իր փորն է սիրում:*

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր  
Գաղափարական իր հորն է սիրում...

*Սո՛ւտ է: Ո՛չ հորը, ո՛չ մորն է սիրում,  
Թանկ չէ ո՛չ որդին և ո՛չ էլ թոռը:*

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր  
Սիրում է կյանքում նա իր... աթոռը:

Աթոռն է սիրում  
Ու նրան տիրում.

Ցանկացած գնով ելնում է նա վեր,  
Փորձում է թռչել նա առանց թևեր,  
Անվերջ սողալով առաջ է գնում,  
Գնում է այսպես և... տարեց-տարի  
Ելնում է այսպես... շալակն աշխարհի:

Պարույր Սևակի ըմբոստ, բայց անաչառ ոգու ողջ ներուժը արտացոլվում էր մասնակիցներից յուրաքանչյուրի աչքերում: Դահլիճն ամբողջությամբ Սևակ էր շնչում: Սևակյան ելևէջների ներքո ես հասկանում էի, որ ներկաները պատրաստ են վերցնել իրենց բաժին դասը և աշխատել հանուն ազգի պայծառ ապագայի: Իսկ պատրաստակամությունից դեպի գործ ճանապարհին քանի՞սը տանուկ կտան կամ կշեղվեն՝ ո՛վ գիտե...



Դահլիճի կենսադաշտը փոխեց Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մանկապատանեկան և գեղագիտական դաստիարակության կենտրոնի թատերական

Խմբակի գեղարվեստական ղեկավար, միջոցառման բեմադրող և կազմակերպիչ  
Արթուր Սարգսյանի վեհերոտ մուտքը: Նա իր սևաթույր հանդերձանքով ներս մտավ  
ամբողջացնելու փառահեղ ցերեկույթի սևակյան շունչը:

Թող եղիցի լո՛ւյս և բյուր լույս եղիցի շիրմին աշխարհը ուսերին այսօր ևս շալակած  
տանող եղերաբախտ բանաստեղծի: Եվ թող երբեք չտիրապետի խավարը...

# # # # #

**«Ծիլ» համայնքը** սփիւռքահայ հովանավորներու հիմնած **«Ամրոց»** ծրագրի մէկ մասն է:  
Համայնքը կը միաւորէ շնորհաշատ պատանիներ եւ պարմանուհիներ Հայաստանի  
Հանրապետութեան եւ Արցախի տարբեր շրջաններէն: Նպատակն է զարգացնել անոնց  
կարողութիւնները զանազան բնագաւառներու, մասնաւորաբար լրագրութեան,  
մշակոյթի եւ արուեստի մէջ:

**Ներածական նկարը** վերարտադրուած է Փարիզի **«Նոր Յառաջ»** պաբերաթերթէն  
(13/1/2024).

**There are no comments yet.**